ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն(ներ)ը, Ազգանուն(ներ)ը

Արթուր Մարտիրոսյան

2. Զբաղեցրած Պաշտոն(ներ)ը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

3. Գործուղման Վայրը և Ժամկետները

Ֆրանսիայի Հանրապետություն, Փարիզ 2022թ հունիսի 27-ից 30-ը

4. Հրավիրող Կողմը

ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի կրթության հարցերով տեղակալ Ստեֆանիա Ջիաննինի

5.Գործուղման նպատակը (Աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Կրթության փոխակերպման գագաթնաժողովին (Transforming Education Summit) ընդառաջ ս.թ. հունիսի 28-ից 30-ը Փարիզում կայանալիք նախապատրաստական միջոցառմանը (Pre-Summit):

6. Քննարկված Թեմաները

ՅՈՒՆԵՍԿՕ-ի աջակցությամբ անցկացվող համաժողովին մասնակցել են տարբեր երկրներից կրթության ոլորտի ղեկավարներ, որոնք քննարկել են գլոբալ հանձնառությունները, ներկայացրել են ազգային խորհրդատվությունների նախնական արդյունքները:

Եղել են պանելային քննարկումներ, որոնց ընթացքում, առանցքային հարցերի շուրջ թեմատիկ քննարկումներից բացի, պատվիրակները 2030 թ. կայուն զարգացման օրակարգի շրջանակում ներկայացրել են կրթության զարգացման լավագույն փորձը:

Թեմատիկ քննարկումները ծավալվել են ներառական, արդար, անվտանգ և առողջ դպրոցների, ուսուցիչների, մասնագիտական ուսուցման, աշխատանքի և կայուն զարգացման հմտությունների, թվային ուսումնառության, կրթության ֆինանսավորման խնդիրների շուրջ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Այցի շրջանակում ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը հանդիպել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի կրթության հարցերով օգնական Ստեֆանիա Ջիանինի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկրների հետ կապերի բաժնի ղեկավար Դով Լինչի հետ: Հանդիպումների ընթացքում Ա. Մարտիրոսյանը ներկայացրել է ՀՀ կրթության ոլորտում ընթացող բարեփոխումները, որոնք ընդգրկում են կրթության բոլոր աստիճանները:

Քննարկվել են կրթության ոլորտում միջազգային փորձագիտական աջակցության տրամադրման առնչվող հարցեր: Ստեֆանիա Ջիանինին և Դոն Լինչը կարևորել են Հայաստանում կրթության ոլորտի փոփոխությունները, վերահաստատել իրենց պատրաստակամությունը փորձագիտական աջակցություն ցուցաբերելու հարցում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալը հանդես է եկել ելույթով և նշել է, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից կազմակերպված կրթության փոխակերպման հարցերի շուրջ միջազգային մակարդակով այս քննարկումները Հայաստանի համար խիստ այժմեական են, քանի որ դրանք և սեպտեմբերին՝ կայանալիք Կրթության փոխակերպման գագաթնաժողովին ընդառաջ կազմակերպվող ազգային խորհրդակցությունները կսնուցեն մեր երկրում ընթացող կրթական բարեփոխումները, ինչպես նաև

կրթության զարգացման երկարաժամկետ ռազմավարական պլանավորման գործընթացը:

Շնորհակալություն հայտնելով կազմակերպիչներին՝ նախարարի տեղակալը նշել է, որ ազգային խորհրդակցությունների արդյունքում դեռևս կհստակեցվեն Հայաստանի հանձնառությունները կրթության փոխակերպման առումով:

Մասնավորապես Արթուր Մարտիրոսյանն առանձնացրել է որակյալ և մատչելի կրթության հասանելիությունը, կյանքի բոլոր փուլերում կրթության իրավունքի իրացումը: Փոխնախարարը փաստել է, որ գիտելիքի կողքին շեշտադրվում են նաև արժեքների և վերաբերմունքի ձևավորումը, հմտությունների զարգացումը: Այնպիսի գիտելիքներ և հմտություններ, ինչպիսիք են՝ մեդիագրագիտություն, կիբերգրագիտություն, ֆինանսական գրագիտություն, ակտիվ քաղաքացիություն, հոգատարություն շրջակա միջավայրի հանդեպ և այլն, որոնք այժմ սովորողները ստանում են հիմնականում ոչ ֆորմալ կրթության միջոցով, պետք է տեղ գտնեն ֆորմալ կրթության մեջ:

Նշելով, որ կրթության ռազմավարության առանցքային մոտեցում է սովորողակենտրոն մոտեցումը, Ա. Մարտիրոսյանը փաստել է, որ որակյալ կրթությունը պետք է հասանելի լինի բոլորին՝ անկախ իրենց տարիքից, աշխարհագրական հեռավորությունից:

Արթուր Մարտիրոսյանն անդրադարձել է նաև Լեռնային Ղարաբաղում կրթության իրավունքի լիարժեք իրացման առաջնահերթության խնդրին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:

Քննարկման արդյունքները կներկայացվեն ընթացիկ տարվա սեպտեմբերին կայանալիք գագաթնաժողովի ժամանակ: Գագաթնաժողովին ընդառաջ, կրթության փոխակերպման ազգային հանձնառությունները մշակելու նպատակով, անդամ երկրների ներկայացուցիչները որոշել են նախաձեռնել ազգային ներառական խորհրդակցություններ՝ բոլոր ոլորտների և գործընկերների ներգրավմամբ:

Ստեղծվելու է հարթակ երեխաների, երիտասարդների, ծնողների և ուսուցիչների համար՝ իրենց տեսակետները լսելի դարձնելու նպատակով: Սա հնարավորություն է տալու միավորելու կրթության համակարգը վերափոխելու ջանքերը՝ ներգրավելով ոլորտի պատասխանատուներին և շահառուներին:

Յուրաքանչյուր երկիր հանձնառու է լինելու ժամանակակից մարտահրավերների պայմաններում (տարատեսակ համավարակներ, գլոբալ կլիմայական ճգնաժամ, արագ տեխնոլոգիական փոխակերպում և այլն) ապահովել որակյալ կրթություն և ցկյանս ուսուցում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

04.07.2022

7/4/2022

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

/պարտականությունները կատարող/